ՎԱՋԳԵՆ ԱՌԱՋԻՆ

Իրավ մեծերի համար դյուրին կյանք ու ժամանակներ չեն լինում, մահկանացուներիս անսահմանության մեջ մեծերն իրենք են պարագծում իրենց ժամանակը և իրենց անելիքը, և նրանց կյանքն ու ժամանակը լինում է դժվար կյանք, դժվար ժամանակ: Իրենց երկրային կյանքի ժամանակը նրանք պարագծում են՝ սահմաններ ու սահմանասյուներ ճանաչելով իրենց նախնիների կյանքն ու վարքը:

Այդպիսին էր Թումանյանի կյանքը, այդպիսին էին Կոմիտաս վարդապետի ու Չարենցի կյանքերը:

Այդպես ապրեց ու գործեց Ներսես Մեծ Աշտարակեցին, իր կյանքն այդպես պարագծեց ու լցրեց ազգային կենդանի բովանդակությամբ Վազգեն Մեծ Վեհափառը:

Ի՜նչ շիտակ, պայծառամիտ ու անվեհեր մարդ էր, ի՜նչ մեծ հայ էր, ի ծնե՝ ի՜նչ ավագ ու տեր էր. իր արթուն կենդանությամբ կարող էիր գլուխդ անվրդով բարձին դնել՝ միամիտ, որ տանդ տակով ջուր չի գնալու և գլխիդ դավադիր սուր չի խաղալու: Իր վարքն ու սոսկական ներկայությունն իսկ դարձնում էր չարակամներիդ հանդուրժող, հանդուրժողներիդ բարեկամ և քեզ կանգնեցնում բարեկամների հոծ բազմության մեջ:

Կեսարիոնը կեսարին տալով և Աստծունը Աստծուն՝ նա երբեք չհեռացրեց նրանց միմյանցից, այլ մերձեցրեց իրեն ու իր շնորհի մեջ միացրեց՝ այդպես չօտարելով ազգից այն, ինչը ազգի անկապտելի զորությունն է՝ ազգային միությունը:

Քառասնամյա իր թագավորությամբ՝ այս պատառոտվող երկիրը, որ անվերջ ճաքեր է տալիս և ազգեր ու ժողովուրդներ է հեռացնում իրարից, միություններ բաժանում, ներկայից անցյալ հատում, ընտանիք ու եկեղեցի կիսում, քառասնամյա իր շնորհալի արքայությամբ երբեք չխորացրեց իր անդունդները մեր ազգի ու հայրենիքի տակ, և հակառակը՝ մենք երբեք, ուրիշ ոչ մի անգամ այսքան միակամ ու միաբան չենք եղել:

Երանի նրան, ով, նրա օրինակով, ինչպես որ ինքը մեր մեծ նախնիների օրինակով, ազգի միության խորհուրդն ու խորհրդանիշն է լինելու, և այր մարդու իր տիրական ներկայությամբ մենք իշխանաբար հպարտ, այրորեն զուսպ, զինվորաբար կորովի ենք մնալու, ինչպես որ էինք Վեհափառի կենդանությամբ, ինչպես որ Վեհափառի վարքն ու կերպարն էին պարտադրվում մեզ:

24 օգոստոսի 1994թ.